Ամանորյա տոների և Բանկի 25-ամյակի կապակցությամբ միջազգային արագ դրամական փոխանցումների գծով անցկացվող ակցիայի պայմանները

1. **Ակցիայի ժամկետը**՝ 2016թ. դեկտեմբերի 12-ից մինչև 2017թ. մարտի 12-ը՝ ներառյալ:
2. **Ակցիայի մասնակիցներ**՝ ակցիայի ընթացքում «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ում (այսուհետ՝ Բանկ) սպասարկվող միջազգային արագ դրամական փոխանցումների համակարգերով Բանկում փոխանցման և/կամ ստացման գործարք (այսուհետ՝ Գործարք) կատարած ֆիզիկական անձ հաճախորդ(ներ) (այսուհետ՝ Հաճախորդ(ներ)):
3. **Ակցիայի պայմանները՝** յուրաքանչյուր Գործարք իրականացնելուց անմիջապես հետո Հաճախորդը մասնակցում է վիճակախաղության՝ արկղից ընտրելով վիճակախաղության կտրոն: Յուրաքանչյուր Գործարքի համար Հաճախորդն իրավունք ունի ընտրելու մեկ վիճակախաղության կտրոն:
4. **Ակցիայի մրցանակները՝** վիճակախաղության բոլոր կտրոնները շահող են և ներառում են հետևյալ մրցանակները.

Մրցանակներ	
4.1	Բանկի միջոցների հաշվին հօգուտ մրցանակակրի 25,000 ՀՀ դրամ գումարով «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ-ՇԱՀԱՎԵՏ» ժամկետային ավանդի ձևակերպում 551-730 օր ժամկետով, տվյալ պահին գործող տարեկան անվանական տոկոսադրույքին գումարած 0.25% պայմանով
4.2	Բանկի կողմից ֆիզիկական անձանց առաջարկվող ցանկացած* դասի 1 (մեկ) հատ Visa կամ MasterCard պլաստիկ քարտ արտոնյալ պայմաններով**. • քարտի տարեկան սպասարկման վճարի համար 50% զեղչ, • քարտի չնվազող մնացորդ՝ 0 (զրո) : **չի վերաբերում Բանկի աշխատավարձային նախագծերի շրջանակներում տրամադրվող պլաստիկ քարտերին* ***արտոնյալ պայմանները կիրառվում են քարտի գործողության ողջ ժամկետի ընթացքում*
4.3	Բանկի կողմից ֆիզիկական անձանց առաջարկվող ցանկացած* դասի մեկ հատ Visa կամ MasterCard պլաստիկ քարտ արտոնյալ պայմաններով**. • քարտի տարեկան սպասարկման վճարի համար 70% զեղչ, • քարտի չնվազող մնացորդ՝ 0 (զրո) : **չի վերաբերում Բանկի աշխատավարձային նախագծերի շրջանակներում տրամադրվող պլաստիկ քարտերին* ***արտոնյալ պայմանները կիրառվում են քարտի գործողության ողջ ժամկետի ընթացքում*
4.4	Բանկի կողմից ֆիզիկական անձանց առաջարկվող Visa Classic կամ MC Standart պլաստիկ քարտ արտոնյալ պայմաններով**. • քարտի տարեկան սպասարկման վճար՝ 0 (զրո) ՀՀ դրամ, • քարտի չնվազող մնացորդ՝ 0 : **չի վերաբերում Բանկի աշխատավարձային նախագծերի շրջանակներում տրամադրվող պլաստիկ քարտերին* ***արտոնյալ պայմանները կիրառվում են քարտի գործողության ողջ ժամկետի ընթացքում*
4.5	70% զեղչ Բանկում առկա անհատական պահատեղերի գործող համապատասխան սակագն(եր)ի համար. *Սույն կետը գործում է Բանկի կայքում հրապարակված անհատական պահատեղեր սպասարկող Գլխամասային գրասենյակում և տարածքային ստորաբաժանումներում տվյալ պահին ազատ պահատեղերի առկայության դեպքում:*
4.6	Ոսկու գրավով վարկի ձևակերպում տվյալ պահին Բանկում գործող տարեկան անվանական տոկոսադրույքից 1% (մեկ տոկոս) ցածր տոկոսադրույքով.

4.7	ՀՀ դրամով «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ-ՇԱՀԱՎԵՏ» ժամկետային ավանդի ձևակերպում տվյալ պահին գործող տարեկան անվանական տոկոսադրույքին գումարած 0.25% պայմանով
4.8	ՌԴ ռուբլիով «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ-ՇԱՀԱՎԵՏ» ժամկետային ավանդի ձևակերպում տվյալ պահին գործող տարեկան անվանական տոկոսադրույքին գումարած 1% պայմանով

5. **Ակցիայի գլխավոր մրցանակ՝** 2 (երկու) հատ «Հավատարիմ հաճախորդ» 25 գրամանոց ոսկյա հուշամեդալ:
   Գլխավոր մրցանակները տրվելու են ակցիայի ընթացքում առավելագույն քանակությամբ Գործարք կատարած Հաճախորդներին: Նույն քանակությամբ Գործարք իրականացրած երկուսից ավելի Հաճախորդների դեպքում, նախապատվությունը կտրվի առավելագույն ծավալով Գործարք իրականացրած Հաճախորդին:

6. Լրացուցիչ պայմաններ

6.1 Ակցիայի արդյունքների ամփոփումը և Գլխավոր մրցանակակիրների ընտրությունն իրականացվելու է ակցիայի ժամկետի ավարտից հետո 1 (մեկ) ամսվա ընթացքում, իսկ մրցանակների հանձնումը՝ մրցանակակիրների ընտրությունից հետո 1 (մեկ) ամսվա ընթացքում Բանկի Գլխամասային գրասենյակում:

6.2 Եթե Բանկի կողմից Գլխավոր մրցանակի տրամադրման համար սահմանված օրը մրցանակակիրը չի ներկայանում Բանկ, ապա նա կարող է ստանալ մրցանակը նշված օրվանից հետո 1 (մեկ) ամսվա ընթացքում, որից հետո մրցանակակիրը կորցնում է մրցանակի ստացման իրավունքը:

6.3 Գլխավոր մրցանակները տրամադրվելու են անձամբ մրցանակակիրներին՝ անձը հաստատող փաստաթղթի հիման վրա, կամ նրանց լիազորված անձանց՝ օրենքով սահմանված կարգով լիազորագիր և անձը հաստատող փաստաթուղթ ներկայացնելու դեպքում:

6.4 Սույն պայմանների 4րդ կետով սահմանված մրցանակների շրջանակներում պլաստիկ քարտ, անհատական պահատեղ, ոսկու գրավով վարկ և ժամկետային ավանդ ձևակերպելիս սահմանվում են հետևյալ կանոնները.

6.4.1 Վիճակահանության կտրոնում նշված պայմաններով ապրանքատեսակի ձևակերպումը թույլատրվում է միայն Հաճախորդի անունով: Եթե Հաճախորդը հրաժարվում է շահումից, ապա այն չի կարող փոխանցվել երրորդ անձին:

6.4.2 Հաճախորդի կողմից մրցանակներից օգտվելու (համապատասխան գործարքը ձևակերպելու) վերջնաժամկետ է սահմանվում մինչև 01.06.2017թ.: